

Անցնելով տնտեսավարման շուկայական համակարգի՝ անցում է կատարվում ձեռնարկատիրական տիպի տնտեսության: Ձեռնարկատիրական գործունեության զարգացման պայմանների ստեղծումը անցումային տնտեսության տրանսֆորմացիոն փոփոխությունների կարեւորագույն բաղադրիչն է:

Ինչպես ցույց է տալիս շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը, տնտեսական ձեռքբերումները (այդ թվում՝ տնտեսական աճի, ներդրումային ակտիվության, տեխնոլոգիական նորարարությունների տեմպերը) ուղղակի կախված են ձեռնարկատիրական ներուժի իրացումից: Կարելի է պնդել, որ ձեռնարկատիրական ունակությունը՝ որպես տնտեսական ռեսուրս ավելի արդյունավետ է իրացվում առավել ազատական տնտեսական համակարգում, որը ծանրաբեռնված չէ պետական բյուրոկրատիայով, ունի նաեւ ձեռնարկատիրական ավանդույթներ եւ օրենսդրական համապատասխան ձեւակերպում: Միաժամանակ, ակնհայտ է, որ ձեռնարկատիրա-

դյունքում ակտիվները (01.08.2003թ. դրությամբ մասնավորեցվել է 1804 միջին եւ խոշոր ընկերություն)՝ տեղաշարժվել են պետականից մասնավոր ոլորտ, բայց ձեռնարկատիրության զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ միջավայր: Այս ոլորտի՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների նկատմամբ անցման սկզբնական փուլում հանրապետության կառավարությունը անտարբեր վերաբերմունք ցուցաբերեց: Պետական աջակցության բացակայությունը, դանդաղեցնելով տնտեսական բարեփոխումները, խոչընդոտում էր հզոր մասնավոր տնտեսության ձեւավորման գործընթացը:

Ինքնուրույն հաղթահարելով դժվարությունները մասնավոր ոլորտը կայացավ, աստիճանաբար ավելացավ ձեռնարկությունների քանակը, որոնք նույնիսկ սկսեցին զարգանալ իրավաօրենսդրական անկատար դաշտի պայմաններում: Միայն մասնավորեցման գործընթացի տասներորդ տարում մասնավոր հատվածի զարգացումը դրվեց



Համիկ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ասիստենտ

ՄԱՍՆԱՎՈՐ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՃՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

կան ներուժի հաջող իրացման երաշխիք են, առաջին հերթին, ձեռնարկատերերը, նրանց որակավորումը եւ կրթական մակարդակը, պատասխանատվություն եւ նախաձեռնություն կրելու ունակությունները, բարձր մրցակցային միջավայրում կողմնորոշվելու կարողությունը, ինչպես նաեւ նրանց սոցիալական պատասխանատվության զգացումը: Ձեռնարկատիրական մեծ ներուժ ունեցող երկրներում (օրինակ՝ ԱՄՆ-ում) սովորաբար կարելու էր ունի փոքր եւ միջին բիզնեսը, որը ձեռնարկատիրության սնուցող միջավայրն է, ձեռնարկատիրական կադրերի յուրատեսակ «դարբնոցը»:

Մասնավոր ձեռնարկատիրական գործունեության զարգացման աստիճանը բնութագրում է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը: Այն շուկայական տնտեսության շարժիչ ուժն է, հասարակության հիմնախնդիրների լուծման կարելու աղբյուրը: Մասնավոր ոլորտը, պարզեցնելով տնտեսական համակարգը, նպաստում է արագ եւ կայուն տնտեսական աճի ձեռքբերմանը:

Չնայած ՀՀ-ում անցման փուլում իրականացված բարեփոխումների ար-

հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության հիմքում:

Դիտարկենք տնտեսության մասնավոր հատվածում առկա հիմնախնդիրները, արդյունավետ զարգացման ուղիները:

Անցումային տնտեսությունում մասնավորեցումը հանգեցնում է ոչ թե կենսունակ ձեռնարկությունների մեխանիկորեն երեւան գալուն, այլ ստեղծում է դրա համար անհրաժեշտ տնտեսաիրավական նախադրյալներ: Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության հետագա ծավալման համար կարելու է նշանակություն ունի իրավաօրենսդրական դաշտի բարելավումը:

Գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավման նպատակով ՀՀ կառավարությունը (2001-03թթ.) մշակել եւ իրականացրել է մի շարք միջոցառումներ՝ ուղղված օրենսդրական դաշտի բարելավմանը: Այդ նպատակով ընդունվել են «Ներքին շուկայի կարգավորման», «Տնտեսական մրցակցության պաշտպանության», «Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության» մասին օրենքները: Աշխատանք-

1. Համաձայն ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության տվյալների
2. Համաձայն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ., ՀՀ ԱԿԾ, www.armstat.am

ներ են տարվել նաև հարկային համակարգի երկակի մոտեցումների հնարավոր բացառման ուղղությամբ: Բայց օրենսդրության անկատարությամբ պայմանավորված անընդհատ փոփոխությունները (մասնավորապես՝ հարկերի մասին օրենքում) լարվածության եւ անորոշության մեջ են պահում ձեռնարկատերերին: Նրանց լիարժեք են համապատասխան տեղեկատվությանը ապահովումն այսօր հիմնախնդիր է: Հարկային համակարգի անկատարությունը (շատ դեպքերում հարկային եւ պարտադիր վճարումները կազմում են ձեռնարկության հաշվեկշռային շահույթի 90 եւ ավելի տոկոսը)² ձեռնարկատերերից շատերին ստիպում է վարել կրկնակի հաշվապահություն, մղում դեպի ստվերային տնտեսություն:

Սեփականատիրական հարաբերությունների համակարգային վերափոխումների առաջին փուլից հետո (սկսած 1997թ.) կարելի էր վերականգնել սեփականության իրավունքի վերաբաշխման առումով բարենպաստ պայմանների ստեղծումը: Սեփականության վերաբաշխման պատահական, անհիմն ռիսկը նվազեցնում է ձեռնարկատիրական գործունեության ակտիվությունը: Պետությունը պետք է իրականացնի համալիր բարեփոխումներ՝ սեփականության իրավունքի գործուն պաշտպանության համար (մասնավորապես՝ պայքար կաշառակերության դեմ, հատկապես դատական, հարկային մարմինների հետ շփման ժամանակ): Պետության կողմից մասնավոր սեփականության անուղղակի կարգավորման եւ իրավական վերահսկողության համար պետք է ստեղծվի անհրաժեշտ իրավական միջավայր, ինչը թույլ կտա հարթել հետագա զարգացման հետ կապված հակասությունները տնտեսական եւ սոցիալական ոլորտներում:

Հիմնախնդիր է ձեռնարկությունների գործունեության անվտանգության ապահովումը: Մասնավոր ձեռնարկատերերը կախվածության մեջ են պետական կառավարման մարմիններից եւ պետական բազմաթիվ պաշտոնյաներից, ովքեր լայն հնարավորություններ ունեն հսկելու մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը, այն թույլատրելու կամ արգելելու, հաճախ՝ ոչ անշահախնդիր: «Ստվերային» բիզնեսի ներկայացուցիչները, լինելով քրեական կառուցվածքների ազդեցության տակ, իրենց շրջանակների մեջ են ներքաշում նաև միանգամայն «անաբուր» բիզնեսը, հարկադրելով ամեն տեսակ շրթուններով:

Խիստ կարևոր է ներդրումային ոլորտի կարգավորումը (այսօր այն կարգավորվում է «Օտարերկրյա ներդրումների մասին» եւ «Պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքներով): Ներդրումների (այդ թվում՝ արտասահմանյան) սակավությունը անհնար է դարձնում տեխնոլոգիապես հնացած ձեռնարկությունների նորացումը՝ պայմանավորելով դրանց անմրցունակությունը: Արդյունքում՝ ձեռնարկությունների գարգացման հեռանկարը մատնվում է անորոշության: Ձեռնարկատիրության զարգացման գործընթացում օտարերկրյա ներդրողների եւ բանկերի փոքր դերը պայմանավորված է ձեռնարկությունների թույլ վերակառուցմամբ: Գործարար անբարենպաստ միջավայրը ռիսկի մեծացման պատճառ է, ինչը հանգեցնում է ներդրումների ցածր մակարդակի: Այս ոլորտի գործունեության արդյունավետությունը կապված է ոչ միայն ներքին տնտեսական քաղաքականության, այլև տարածաշրջանային խնդիրների հետ:

Հանրապետության տնտեսական եւ հասարակական կյանքում կարևորվում է փոքր ու միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) դերը, որտեղ որպես փոքր սեփականատեր ընդգրկվում է բնակչության մեծամասնությունը: Չնայած ՓՄՁ ոլորտը մի կողմից բավական ձկուն է (դրանց ոչ մեծ չափերը, տեխնոլոգիական եւ կառավարման տեսակետից ճկունությունը, ոչ մեծ կապիտալ ներդրումների պահանջը թույլ են տալիս արագ արձագանքել շուկայի կառուցվածքի փոփոխություններին), մյուս կողմից՝ բավական խոցելի (այս ոլորտի վարկավորման հետ կապված

են առավել բազմազան ռիսկեր, քան ավանդական վարկավորման դեպքում): Այդ հանգամանքը հիմք ընդունելով՝ զարգացման նպատակով վարկավորման գործընթացը պետք է նպատակաուղղել ձեռնարկությունների արտադրական եւ առևտրային հզորությունների ընդլայնմանը, տրամադրվող վարկը չպետք է խոչընդոտի ձեռնարկության զարգացումը եւ դառնա սնանկացման պատճառ (վարկի հնարավոր առավելագույն մեծությունը պետք է որոշվի գույքի շահույթի հիման վրա, որը պետք է գերազանցի մարման գումարները կոնկրետ ժամանակահատվածում):

Մասնավոր ձեռնարկությունների մեծ մասը ֆինանսական սեփական աղբյուրների հաշվին ներդրումներ կատարելու հնարավորություն չունի, իսկ երկարաժամկետ վարկերը տրամադրվում են խիստ սահմանափակ ծավալներով եւ բարձր տոկոսադրույքներով: Ֆինանսական միջոցների ներգրավումը արժեթղթերի շուկայի միջոցով գրեթե անհնար է: Այս առումով կարևորվում է պետական աջակցությունը (հարկային արտոնություններ, արտոնյալ վարկերի տրամադրում, տեղեկատվություն մասնավոր ոլորտի եւ պետական ռեսուրսների մասին): Վերջինը պետք է նպաստի ներդրումային հիմնադրամների ձևավորման եւ մեծացնի այս ոլորտում ներդրումային կառույցների մասնակցության հնարավորությունները: Պետության աջակցությունը փոխհատուցվում է հիմնականում ձեռնարկությունների կողմից սոցիալական նշանակության միջոցառումների իրականացմամբ: Փոքր ձեռնարկություններն ինքնուրույն, առանց պետական աջակցության չեն կարող հաղթահարել այն հիմնախնդիրները, որոնք ծագում են դրանց կայացման եւ զարգացման ժամանակ:

ՓՄՁ ոլորտի ձեռնարկատիրության սուբյեկտները դասակարգվում են համաձայն «Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի (28.12.2002.), որը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 2-ում ներկայացված է Հայաստանի ՓՄՁ ոլորտի զարգացման արդյունքները հանրապետության տնտեսության հինգ բազային ճյուղերում (արդյունաբերություն, շինարարություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ եւ կապ, առևտուր եւ հասարակական սնունդ) եւ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում ըստ տնտեսության մասնավոր հատվածի 2003թ. վիճակագրական նկարագրի վերլուծության ամփոփ տվյալների: Ընդհանուր առմամբ, գրեթե բոլոր ճյուղերում ձեռնարկությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր եւ փոքր կազմակերպությունները, բայց կոնկրետ ճյուղի արտադրանքի ընդհանուր ծավալում դրանք ունեն անհամեմատ փոքր տեսակարար կշիռներ: Պատկերն այլ է միայն բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ոլորտում. գերփոքր եւ փոքր ձեռնարկությունները բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալում ունեն ամենամեծ տեսակարար կշիռը: Վերլուծության արդյունքներից հետևում է, որ փոքր ձեռնարկությունների արդյունավետ զարգացումը լրացուցիչ խրախուսման կարիք ունի:

Մասնավորեցված ընկերությունների զարգացման լուրջ արգելք են պարտքերը: Շատ մասնավոր ձեռնարկություններ, պարտքերի բեռը չհաղթահարելով, սնանկ են ծանաչվում: Այսօր սնանկացման գործընթացի բարելավման նպատակով կարևորվում է օբյեկտիվ սոցիալ-տնտեսական հայտանիշների համակարգի սահմանում, ըստ որի՝ եթե ձեռնարկությունը լուծարվում է, կարելի էր վերականգնել սուբյեկտի գույքի օտարման ընթացակարգը (այն եւս բարելավման կարիք ունի), իսկ եթե չի լուծարվում՝ ֆինանսական առողջացման ծրագրի դերը: Պետք է մշակվեն արհեստակարգի սնանկ հայտարարվող ընկերությունների գոյությունը բացառող միջոցառումներ:

Մասնավորեցման գործընթացում ընդհանուր պարտավորությունների, դեբիտորական եւ կրեդիտորական պարտքերի

Աղյուսակ 1.

Փոքր եւ միջին ձեռնարկատիրական սուբյեկտների դասակարգումը	Արդյունաբերություն	Գյուղատնտեսություն	Շինարարություն	Տրանսպորտ (բեռնափոխակրումներ)	Տրանսպորտ (ուղեւորափոխակրումներ)	Կապի ծառայություններ	Սանրածախ առևտուր (խանութների միջոցով)	Համընդանուր վերականգնողական օբյեկտներ	Սպառողական ապրանքների իրացման շուկաներ	Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայություններ	Բնակչությանը մատուցված մշակութային ծառայություններ
գերփոքր	մինչև 5 մարդ	մինչև 5 մարդ	մինչև 5 մարդ								
փոքր	6 - 50 մարդ	6 - 25 մարդ	6 - 15 մարդ								
միջին	51 - 100 մարդ	26 - 50 մարդ	16 - 30 մարդ								
խոշոր	101-ից ավելի մարդ	51-ից ավելի մարդ	31-ից ավելի մարդ								

փոխադարձ չվճարումների հիմնախնդիրն ցուցաբերվեց ոչ կառուցողական մոտեցում, արդյունքում շատ ձեռնարկություններ լուծարվեցին: Նվազեց գործող ձեռնարկությունների թիվը, ինչը հանգեցրեց ռեսուրսների չհիմնավորված կորուստների եւ գործազրկության աճի: Այստեղ կարելի է արժեթղթերի երկրորդային շուկայի դերը: Արժեթղթերի շուկայի զարգացումը կապահովի պարտքերի վերակազմավորման պայմանով կան երաշխիքներով մասնավորեցման գործընթացի կազմակերպումը (մինչև այսօր բաժնետոմսերի փոխարկման իրավունքով պարտատոմսերի թողարկմամբ պետական գույքի մասնավորեցում չի կատարվել, դա վկայում է արժեթղթերի շուկայի զարգացման ցածր աստիճան): Բաժնետոմսերի մուտքն այս շուկա կակտիվացնի անշարժ գույքի շուկան, ինչի շնորհիվ ձեռնարկությունները կունենան իրենց արժեքը: Արժեթղթերի երկրորդային շուկան զարգանալով կվերահսկի մասնավորեցված ձեռնարկությունների գործունեությունը, կապահովի ֆինանսական հոսքեր դրանց համար, արդյունքում կբարձրանա բաժնետիրական կառավարման արդյունավետությունը, կնվազի հանրապետությունում շուկայական կառույցների կայացման եւ զարգացման անհամաչափությունը:

Մակրո եւ միկրոմակրոդեմոստրացիան բյուջետային կոշտ սահմանափակումների կիրառումը տեխնոլոգիայաչափ հնացած ձեռնարկությունների պայմաններում կարող է որոշակի դրական արդյունք տալ միայն շատ կարճ ժամանակահատվածում, իսկ երկարաժամկետ հեռանկարում այն էլ ավելի է խորացնում «տեխնոլոգիական ճեղքվածքը»: Այս առումով էական նշանակություն ունեն նորամուծությունները: Հաշվի առնելով բոլոր առանձնահատկությունները՝ մեր ձեռնարկությունների համար նպատակահարմար է զարգացման ռիսկի նվազագույն աստիճան ունեցող տեխնոլոգիական նորամուծություններ պարունակող ռազմավարությունը:

Մասնավոր ընկերությունների անկատար կառավարման համակարգի կատարելագործման նպատակով կարելի է գործարարության ուսուցման եւ վերապատրաստման դասընթացների կազմակերպումը: Թերեւս, ազատական տնտեսական վերափոխումների շարունակման հետ միասին, վճռորոշ գործոններից մեկը կրթության այնպիսի համակարգն է, որը ներկա եւ ապագա ձեռնարկատերերին կկարողանա ոչ միայն տալ ժամանակակից կառավարման գիտելիքներ, այլեւ հաղորդել բարոյական արժեքների որոշակի համակարգ, ստեղծել զարգացող երկրներում լայնորեն տարածված նոր ձեռնարկատիրական էթիկա: Կառավարման ժամանակակից համակարգի ներ-

դրումը պահանջում է հաշվի առնել շուկայի ազդեցությունը ոչ միայն ձեռնարկության տնտեսավարման արտաքին պայմանների, այլեւ ներքին պայմանների վրա, այսինքն՝ վերակառուցել հարաբերությունները ընկերության շրջանակներում, ընդլայնել տնտեսական դեմոկրատիան: Չափազանց կարելի խնդիր է սեփականաշնորհված եւ բաժնետիրական ձեռնարկություններում հարաբերությունների նոր կուլտուրայի ձեւավորումը աշխատողների միջեւ (նրանցից շատերը դարձել են միաժամանակ եւ՝ սեփականատերեր, եւ՝ կառավարիչներ), ինչպես նաեւ բաժնետերերի՝ իրենց իրավունքների եւ պարտականությունների գիտակցումը: Հաշվի առնելով հանրապետության աշխատանքային ռեսուրսների կրթական եւ որակավորման բարձր մակարդակը, կրթության զարգացած համակարգը, այս ամենի համար հնարավորություններ կան:

Վճռական նշանակություն ունի ձեռնարկատերերի՝ իրենց սոցիալական պատասխանատվության գիտակցումը: Այնպիսի երկրում, ինչպես Հայաստանը, որտեղ սոցիալական արդարության գիտակցությունը սրված է, ձեռնարկատերերը կարող են դառնալ հասարակական եւ քաղաքական կյանքի առավել կարեւոր տարր, քան զարգացած շուկայական տնտեսություն ունեցող որոշ երկրներում: Հետեւաբար, զարգանալով՝ մասնավոր ոլորտը պետք է անպայման մասնակցություն ունենա հանրապետության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, ինչն էլ ավելի կկարելի նրա դերը ՀՀ ազգային տնտեսությունում:

Մասնավորեցման նախկին բացթողումները հաշվի առնելով եւ նպատակաուղղվելով դեպի հզոր մասնավոր տնտեսություն, կարելի է մասնավորեցման հետագա գործընթացը՝ երրորդ փուլը (սկսած 1999թ.): Այն իրականացվում է ներդրումային մրցույթների միջոցով՝ ապահովելով ֆինանսական եւ նյութական ռեսուրսների ներհոսք մասնավորեցվող ընկերություններում: Մասնավորեցման այս ուղին նպատակ ունի լուծել ներդրումային եւ զբաղվածության հիմնախնդիրները: Գործընթացի արդյունքում պետական բյուջե մուտքագրված գումարները նպատակային ձեւով պետք է ուղղվեն մասնավորեցված ընկերությունների վարկավորմանը՝ այդ վարկերի հաշվին ներդրումներ կատարելու համար: Նախ, վերացնելով մասնավորեցման գործընթացը դանդաղեցնող խոչընդոտները, պետք է բարձրացնել այն վերահսկող մեխանիզմների արդյունավետությունը, կրճատել իրականացման ժամկետները՝ գույքի թալանից եւ փոշիացումից խուսափելու համար: Հաշվի առնելով տնտեսական դաշտի առանձնահատկությունները՝ պետք է մեծաց-

Աղյուսակ 2.

		գերփոքր	փոքր	միջին	խոշոր
Արդյունաբերություն	1	50.9	35.0	4.9	13.0
	2	2.0	11.0	4.0	80.0
Գյուղատնտեսություն	1	54.0	35.0	8.0	3.0
	2	3.0	11.0	31.0	55.0
Շինարարություն	1	34.9	40.9	10.4	13.9
	2	3.0	18.0	13.0	66.0
Տրանսպորտ (բեռնափոխադրումներ)	1	13.2	26.5	17.6	42.7
	2	0.4	5.3	6.3	90.7
Տրանսպորտ (ուղեւորափոխադրումներ)	1	33.2	29.1	19.4	18.3
	2	2.1	8.5	26.8	62.6
Կապի ծառայություններ	1	56.3	17.3	13.8	12.6
	2	0.5	1.0	3.4	95.1
Սանրածախ առևտուր (խանութների միջոցով)	1	86.1	11.0	1.8	1.1
	2	22.7	20.3	13.4	43.6
Հանրային սննդի օբյեկտներ	1	75.3	19.0	3.9	1.8
	2	28.3	27.7	8.3	25.7
Սպառողական պահանջների իրացման շուկաներ	1	54.2	30.5	8.5	6.8
	2	9.3	21.1	6.8	62.8
Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայություններ	1	84.2	12.7	2.4	0.7
	2	64.3	24.4	7.4	3.9
Բնակչությանը մատուցված ծառայություններ	1	52.8	19.5	9.4	18.3
	2	22.4	3.8	6.7	67.1

1 - կազմակերպությունների տեսակարար կշիռը %-ով
2 - թողարկված արտադրանքի կամ մատուցված ծառայությունների տեսակարար կշիռը %-ով

նել ներդրումային հիմնադրամների մասնակցության աստիճանը մասնավորեցման գործընթացում: Կարելի է նաև գործընթացի շարունակության ճիշտ ձևի ընտրությունը, այն պետք է խթանի նոր աշխատատեղերի ստեղծումը եւ հների վերաբացումը, ինչը կնպաստի բնակչության եկամուտների ավելացմանը՝ նվազեցնելով աղքատությունը:

Կարելի է նաև երկրի տնտեսության ավելի խոր ինտեգրացումը համաշխարհային տնտեսական համակարգին: Արտաքին առևտրային քաղաքականության բնագավառում անհրաժեշտ է սերտ համագործակցություն միջազգային ֆինանսական հաստատությունների հետ: Այս բնագավառում թիվ մեկ խնդիր է ներքին շուկայի պաշտպանությունը: Այդ նպատակով իրականացվող հովանավորչական քաղաքականությունը պետք է խթանի տեղական արտադրության զարգացման համար անհրաժեշտ նյութական ռեսուրսների (հումքի, կիսաֆաբրիկատների, երկրում չարտադրվող մեքենասարքավորումների) ներկրումը հանրապետություն կիրառելով ներկրման տարբերակված հարկեր: Պետությունը պետք է հովանավորչական քաղաքականություն իրականացնի նաև զարգացման հեռանկար ունեցող «նորաստեղծ» ձեռնարկությունների նկատմամբ եւ ամեն կերպ խթանի արտահանումը:

Մասնավոր ձեռնարկատիրական ոլորտը անհավասարաչափ է զարգանում ՀՀ մարզերում, ինչն իր հերթին էլ ավելի է խորացնում տնտեսական եւ սոցիալական ծանր վիճակը հանրապետության մարզերում: Ձեռնարկատիրական գործունեության կայացման եւ հետագա զարգացման հեռանկարից այսօր զրկված են հատկապես այն մարզերը, որոնք հեռու են հաղորդակցման ուղիներից, արդյունաբերական եւ առևտրային կենտրոններից: Այս առումով խիստ կարելի է ձեռնարկա-

տիրական գործունեությանը պետական աջակցության տարածաշրջանային քաղաքականությունը: Այս խնդրի լուծումն ունի ռազմավարական նշանակություն, քանի որ կարող է նպաստել հանրապետության տարածաշրջանային զարգացման սոցիալ-տնտեսական անհամասնույթունների նվազեցմանը:

Առանձնակի կարելի է այն փաստը, որ մեր հանրապետությունում արձանագրվող տնտեսական աճը (2003թ. ՀՆԱ աճը կազմել է 13.9%, որի ավելի քան 80%-ը ապահովել է տնտեսության մասնավոր հատվածը³ չի զուգորդվում մասնավոր նոր ձեռնարկությունների շուկա՝ զանգվածային մուտքով: Այդ աճի ձեռքբերումներից օգտվողները պատկանում են նեղ ու կենտրոնացված շրջանակի: Պատճառներից մեկն այն է, որ պետական ձեռնարկությունների մասնավորեցման գործընթացն իրականացվեց որոշակի բացթողումներով, եւ դրա հետ կապված սպասելիքները չարդարացան: Մասնավորապես՝ չձեռնարկվեց մասնավոր ձեռնարկատերերի լայն խավ: Ըստ Համաշխարհային բանկի փորձագետների՝ մեր հանրապետությունում նոր ձեռնարկությունների առաջացման խրախուսումն իրականացվել է արագ, իսկ կարգապահության հաստատումը՝ դանդաղ: Հակասական բարեփոխումների արդյունքում ստեղծված տնտեսական վիճակից դուրս գալու համար պետք է խրախուսել նոր ձեռնարկությունների մուտքը շուկա, այստեղ խիստ կարելի է նաև «խաղի» հավասար կանոնների ապահովումը:

Հանրապետությունում տնտեսական աճը համընդհանուր դարձնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել մասնավոր ոլորտի արագ զարգացման միջավայր՝ պարզեցնելով հարկային համակարգը, կարգավորելով դատաիրավական ոլորտը, ավարտին հասցնելով տնտեսության հնացած հատվածների վերակառուցումը:

Մասնավոր ձեռնարկատիրական գործունեության զարգացումը ոչ միայն կնպաստի հասարակության նյութական ու հոգեւոր ներուժի ավելացմանը, յուրաքանչյուր անհատի ընդունակությունների եւ տաղանդի գործնական իրականացման բարենպաստ հիմք կստեղծի, այլև ուղի կհարթի ազգի միաբանման, ազգային ոգու եւ հպարտության պահպանման համար: